ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐ

1. Հարցաթերթիկ՝ համապատասխան կերպով լրացված իսպաներեն կամ անգլերեն լեզուներով, ստորագրված անձամբ դիմողի կողմից: Իրենց սեփական անձնագիրը չունեցող, այլ մոր/հոր անձնագրում նշված երեխաների համար նաև անհրաժեշտ է հարցաթերթիկի ձևաթուղթ լուսանկարով: Անչափահասների փոխարեն դիմումը ստորագրում է ծնողներից կամ խնամակալներից մեկը:
2. Երկու գունավոր 3,5 x 4,5 սմ լավ որակի լուսանկար սպիտակ ֆոնի վրա՝ արված վերջին 6 ամսվա ընթացքում: Մեկ լուսանկարն անհրաժեշտ է փակցնել հարցաթերթիկին:
3. Արտասահմանյան անձնագիր, որը վավերական է Շենգենյան գոտուց մեկնելու վերջին ենթադրյալ ամսաթվից հետո առնվազն երեք ամսվա ընթացքում, որը պարունակում է առնվազն երկու մաքուր էջ և տասը տարուց հին չէ, և դրա բոլոր էջերի պատճենները (նույնիսկ դատարկ):
4. Այլ արտասահմանյան անձնագրեր՝ գործող և չեղարկված: Երկրորդ գործող անձնագիրն անհրաժեշտ է տրամադրելու համար, չեղարկված անձնագրերը ներկայացվում են դիմողի հայեցողությամբ: Բոլոր անձնագրերն ընդունվում են միայն դրա բոլոր էջերի պատճենները (նույնիսկ դատարկ) կցելու դեպքում:
5. Համաքաղաքացիական անձնագրի լրացված էջերի պատճենը:
6. **Քաղվածք մասնավոր սեփականության սեղանամատյանից (Nota simple)**: Քաղվածքը պետք է տրված լինի փաստաթղթերի ներկայացնելու ամսաթվին նախորդող վերջին երեք ամիսների ընթացքում: Ուշադրություն դարձրեք, որ որպես անշարժ գույքի սեփականատերեր փաստաթղթերը կարող են ներկայացնել միայն առուվաճառքի պայմանագրում նշված դիմողները, նրանց օրինական ամուսինները (հարազատությունը հաստատելու դեպքում) և անչափահաս երեխաները (այդ թվում՝ որդեգրված, հարազատությունը հաստատելու դեպքում), ինչպես նաև անշարժ գույքի սեփականատերերի երեխաները՝ մինչև 21 տարեկանը ներառյալ, ուսումնական հաստատության ցերեկային բաժնում սովորելու պայմանով (փաստաթղթային հաստատման դեպքում):
7. Բժշկական ապահովագրության պոլիս, որն ընդգրկում է մնալու ամբողջ ժամանակահատվածը կամ առաջին ուղևորությունը և վավերական է Շենգենյան համաձայնագրի բոլոր երկրների համար: (Անդորրա ճանապարհորդողների համար՝ ապահովագրական պոլիսի տարածքային ծածկույթը պետք է տարածվի Շենգենի և Անդորրայի վրա): Պոլիսը պետք է ծածկի բոլոր ծախսերը, որոնք կարող են առաջանալ բժշկական պատճառներով հայրենադարձման, շտապ բժշկական օգնության, շտապ հոսպիտալացման կամ մնալու ընթացքում դիմողի մահվան կապակցությամբ: Ապահովագրական ծածկույթը՝ 30.000 դոլարից ոչ պակաս:

Գունավոր տպագրված կամ կենդանի կապույտ կնիքով:

8. Երկկողմանի ուղղությամբ ավիատոմսերի ամրագրում կամ այլ տրանսպորտային միջոցի (ավտոմեքենա, գնացք և այլն) հաստատում: Եթե ճանապարհորդում եք սեփական մեքենայով, պետք է ներկայացել ավտոմեքենայի տեխնիկական անձնագրի, վարորդական իրավունքի և ավտոմեքենայի միջազգային ապահովագրության (Գրին Քարդ) պատճենները: Եթե մեքենան վարձակալված է, ներկայացնել վարձակալության պայմանագիրը: Նաև ներկայացվում են պլանավորվող ուղևորության տպագրված երթուղային թերթը՝ նշելով օտարերկրյա պետությունների սահմանները հատելու ամսաթվերը:
9. **Տնտեսական երաշխիքներ. Տեղեկանք աշխատանքի վայրից**: Տեղեկանքի փոխարեն թույլատրվում է տրամադրել ֆիզիկական անձի եկամտային հարկ 2 ձևը: Տվյալ փաստաթղթերի արդիականությունը տրման ամսաթվից 1 ամիս է: Դիմողները, որոնք ունեն սեփական բիզնես, ներկայացնում են ձեռնարկության գրանցման վկայականի պատճենը և հարկ վճարողի հաշվառման համարի (ՀՎՀՀ) փաստաթղթի պատճենը:
10. **Ֆինանսական երաշխիքներ.** Մեկ հոգուն 95 € մնալու յուրաքանչյուր օրվա համար (առնվազն 855 եվրո մեկ մարդու ուղևորության համար): **Բանկային հաշվից քաղվածքի բնօրինակ (բանկի ձևաթղթով), որը տեղեկություններ է պարունակում նշված հաշվում վերջին երեք ամսում դրամական միջոցների շարժի մասին:** Նաև դիմողը կարող է տրամադրել արժույթ գնելու մասին տեղեկանք:

Ուղևորությունը հովանավորելու դեպքում ներկայացվում է տպագիր տեսքով հովանավորչական գրություն և հովանավորի ֆինանսական երաշխիքները (քաղվածք բանկի հաշվից կամ տեղեկանք արժույթ գնելու մասին):

11. **Օտարերկրյա քաղաքացիները** ներկայացնում են հետևյալ փաստաթղթերից մեկը՝ կացության քարտ, ժամանակավոր մնալու թույլտվություն, աշխատելու թույլտվություն, աշխատանքի արտոնագիր կամ ՀՀ երկարաժամկետ վիզա: Դիմողը պետք է հաստատի վերջին 6 ամսվա ընթացքում իր անընդհատ գտնվելը ՀՀ տարածքում վերը թվարկված մեկ կամ մի քանի փաստաթղթերով: Հայաստանի, Բելառուսի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի քաղաքացիներին չի պահանջվում:
12. **Անչափահասների համար անհրաժեշտ է ներկայացնել ծնողական վկայականի բնօրինակը և պատճենը**: Անչափահասների համար, որոնք մեկնում են առանց ծնողների/խնամակալների ուղեկցության, անհրաժեշտ է տրամադրել նոտարական համաձայնություն մեկնելու վերաբերյալ երկու ծնողի կողմից, եթե անչափահասը ճանապարհորդում է մենակ, երրորդ անձի կամ կազմակերպության հետ: Նոտարական համաձայնությունը պետք է պարունակի այն մարդու անունը, ով անչափահասին ուղեկցելու է ուղևորության ընթացքում, և մեծահասակի անունը, ով երեխայի համար պատասխանատվություն է կրելու նրա՝ Իսպանիայում գտնվելու ընթացքում: Նոտարական համաձայնությունը պետք է տրված լինի ոչ վաղուց (փաստաթղթերը ներկայացնելու ամսաթվից 6 ամսից ոչ ավելի) և ամբողջովին ծածկել ուղևորության

ամսաթվերը: Միայն մեկ ծնողի/խնամակալի ուղեկցությամբ մեկնող անչափահասների համար անհրաժեշտ է տրամադրել մեկնման վերաբերյալնոտարական համաձայնություն երկրորդ ծնողից/խնամակալից: Այն դեպքում, երբ երեխան գնում է ծնողների/ծնողներից մեկի/ուղևորության ընթացքում երեխային ուղեկցող այլ անձի հետ միասին, իսկ ծնողները/ծնողներից մեկը/ուղեկցող անձն արդեն իսկ ունեն վիզաներ/վիզա, ապա անհրաժեշտ է տրամադրել դրանց/դրա պատճենը և ավիատոմսերի ամրագրումը, որոնք հաստատում են երեխայի ուղեկցությունն ուղևորության ընթացքում:

Խնամակալության տակ գտնվող անչափահաս դիմողների համար անհրաժեշտ է ներկայացնել երեխայի մեկնելու վերաբերյալ խնամակալության մարմինների համաձայնությունը՝ անկախ նրանից, թե ում հետ է գնում երեխան (երկու խնամակալների/խնամակալներից մեկի/3-րդ ուղեկցող անձի հետ):

Երեխայի մեկնելու վերաբերյալ համաձայնություն ներկայացվում է նաև հետևյալ դեպքերում.

Ծնողները կամ ծնողներից մեկը ժամանակավորապես կամ մշտական բնակվում են Իսպանիայի տարածքում;

Երեխան և ծնողները/ծնողներից մեկը/ուղեկցող անձն ուղևորությունից վերադառնում են տարբեր ամսաթվերի;

Երեխան և ծնողները/ծնողներից մեկը/ուղեկցող անձը մեկնում են ուղևորության և վերադառնում են միասին, սակայն ծնողները/ծնողներից մեկը/ուղեկցող անձը երեխայի՝ Իսպանիայի տարածքում մնալու ընթացքում պլանավորում են/է որոշ ժամանակով լքել Իսպանիայի տարածքը;

Երեխան և ծնողները/ծնողներից մեկը/ուղեկցող անձը ճանապարհորդում են տարբեր չվերթներով: